

Այլ ես ասեմ ձեզ՝ սիրեցէք զԹշնամիս ձեր»։ Հ. 153 աստուածաշունչ. «Եւ կերար ի նմանէ՝ անիծեալ լիցի երկիր ի գործս քո. — և արդ՝ աւանիկ»։

Դ) Հագագից միայն քա՛նն է գործ ածուում եւ այն էլ այն և սառերի վերայ, որոնք իբրեւ Վ պէտք է հնչուեն։ Օր. «Աղա՛ւնի. — Թեա՛ւոր. — մարմնա՛ւոր» ևլն։

Ե) Ամանակներից սուղը գործ է ածուում երբեմն ք-ի վերայ, մանաւանդ տղաղարձութեանց ժամանակ, երբեմն ա-ի վերայ։ Օր. «ռ՞ընկունք. անրժք՞շկելի. — Եւ ա՞սէ Տէր ցՅիսուս. — Եւ ա՞յս են Թագաւորութիւնք. — Եւ որպէս ա՞ռ Ռոբովամ»։

Զ) Երկար պարզ գործածութիւն չունի, որովհետեւ ձեռով շփոթուած է շեշտի ձեւերի հետ։

Է) Կիրքի նշանները գործ են ածուում իբրեւ գրութեան օժանդակ գծիկներ։

Սպ. Մ.



ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ

ԶԻՐԱԿԱՆԸՅՈՂ ՆԱԽԱԳՈՒՇԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Ընդունակ եւ անընդունակ աշակերտների մասին).

„Вѣстникъ Воспитанія“ ամսագրի այս տարուայ սեպտ. համարը ծանօթացնում է մեզ Նէապոլի համալսարանի մանկավարժութեան ուսուցչապետ Ֆօրնէլլի մի զեղեցիկ և հետաքրքրաշարժ յօդուածի հետ, որ Թարգմանուել է գերմաներէնի՝ Kinderfehler ամսագրում։ Յօդուածը կրում է «Զիրականացող նախադուշակութիւնների մանկավարժի զիւտողութիւնները և խորհրդածութիւնները աշակերանների հո-

գեկան կեանքի վերայ՝ վերնադիրը և նուիրուած է կեանքի մէջ յաճախակի կրկնուող և սովորականի շարքն անցած այն զարմանալի երևոյթի ուսումնասիրութեան, թէ ինչպէս շատ անգամ դպրոցներում անընդունակ, ապուշ և անպէտք համարուած և այդ պատճառով արտաքսուած աշակերտներէց շատերը կեանքի և առհասարակ գործի մէջ աւելի յաջողութիւն են գտնում, ասած դնում, փառաւոր գործունէութիւն ունենում ու մեծ անուն հանում, քան երբեմն ընդունակ, յառաջագիւմ և ապագայ խոտաւոցոյնները, դոնէ այդպէս համարուած ու ձանաչուածները։ Այս կողմից ահա ամաններ հետաքրքրութիւն են ներկայացնում և նպատակաւոր ու ուսանելի են հեղինակի խորհրդածութիւններն ու դիտողութիւնները, եթէ ի նկատի ունենանք մանաւանդ որ նա ոչ միայն սոսկ գիտնական է, այլև գործնականապէս փորձուած ու հմուտ մանկավարժ։

«Իմ յոգուածի նպատակն է, ասում է հեղինակը, կարծիքներ փոխանակել ընկեր պաշտօնակիցներէս հետ և նոցա ուշադրութիւնը դարձնել մի շարք փաստերի վերայ, որոնք ինչ իսկ շատ անգամ զարմացրել են։ Թող մանկավարժներէց ամեն մէկը յիշէ, թէ ինչպէս յաճախ նա իւր աշակերտների ազդեցիկ մասին սխալ ենթադրութիւններ ու գուշակութիւններ է արել։ Աշխոյժ, սրամիտ մտնուկների որոնց վերայ ստորին գասարաններում ամեն տեսակի յոյսեր ենք դրել, աւարտման տարին հազիւ հազ կարողացել են միջակների հաւասար յառաջադիմութիւն ցոյց տալ, աշակերտների որոնք դպրոցի բարձր գասարանների ծաղիկներն են համարուել, կեանքի մէջ սախալուած են և զիւր բաւականանալ փոքրիկ առիժանութիւն, ողորմելի փաստարանի ամենահամեստ գերով։ Հաւանալի է, այստեղ խօսքը նոցա մասին չէ, որոնք իրենց կեանքը փչացրել են յանցանքներով, մոլի կրքերով, այլ միայն նոցա, որոնք չեն կարողացել ասած անցնել մտաւոր հարստութեան պակասութեան կամ լարուած գործունէութեան համար անընդունակ լինելու պատճառով։ Կեանքի մէջ այդպիսի անյաջողների պատահելով, մանկավարժը զուր կը փնտռէ նոցա մէջ հոգեւոր կրակի այն փայլուն

կայծը, որ ընդհանուր հիացմունք էր առաջացնում՝ մինչ նորա աշակերտական նստարանի վերայ էին գանուում: Պարզ է, որ ուսման ժամանակ նորա չափազանց անհաշիւ կերպով են սպառել իրենց մտաւոր ուժերը, աոկոս ստանալու փոխարէն վատնել են և՛ հիմնական գրամագլուխը, ստացուել է վաղահաս հունձ, որ վերջը ուժաթափ է անում իրեն աշխուժեցնող հոգը: Անհամեմատ աւելի դժուար է բացատրել հակառակ դէպքերը, որոնք, ի հարկէ, բացառութիւն չեն կալում մանկավարժական դործնականութեան մէջ, երբ մինչև իսկ փորձուած մանկավարժները շփոթում են իսկական տաղանդն ու անսովոր մտաւոր ընդունակութիւնները, մի բանի հանգամանքների շնորհիւ, որոնց մասին ստորև կը խօսուի՝ մտաւոր ընդունակութիւնների կատարեալ բացակայութեան և մինչև անգամ մտային պակասաւորութեան (дефективность) հետ:

Իրրև մի գեղեցիկ օրինակ՝ Ֆօրնէլլին նկարագրում է իւր մի պաշտօնակից ընկերոջ հետ ունեցած խօսակցութիւնը, որը հանդիպել է իւր նախկին սաներից մէկին պատգամաւորների ժողովում, և սա եղել է ոչ թէ համեստ և լռելիայն ու բիշների կաշմիքներին հաւանութիւն տուող մի անգամայն այլ ազդեցիկ և յարգելի գեկավար մի կուսակցութեան, նորա խօսքերին ուշադրութեամբ ունկնդիր էր լինում ամբողջ պարլամենտը: Ֆօրնէլլին շատ է զարմանում իմանալով, թէ ընկերոջ ամենամեծնդունակ աշակերտներից մէկը, որին նա շատ անգամ ամբողջ դասարանի առաջ այդպէս էլ անուանել է և, չնայելով նրա կեանքի մէջ ունեցած յաջողութիւններին՝ յամառութեամբ շարունակում էր նոյնը համարել, այդչափ բարձր դիրք է գրաւել, ուստի և խնդրում է նորան մանրամասնաբար բացատրել, թէ ինչն է համարում այդպիսի տարօրինակ փոփոխութեան պատճառը:— «Նա ուղղակի անամօթ և խռովարար է, բոլորքուած պատասխանում է հեղինակի խօսակցը, և դրա մէջ է նրա յաջողութիւնների գաղտնիքը:— «Դու ինքդ, ի հարկէ, հասկանում ես, որչափ անարդար ես, շարունակում է Ֆօրնէլլին, մենակ բացասական յատկութիւններով չի կտրելի ոչ մի բանի հասնել, պարզա-

պէս դու չես ուղում խոստովանել սխալդ. նրա բնաւորութեան յնդժա երբ, որ դու բոլորովին սխալ կերպով անամութութիւն և խաբեբայութիւն ես անուանում, իրօք միայն համարձակութիւն և հեղինակութիւն ստեղծելու կարողութիւն են՝ այսինքն այնպիսի յատկութիւններ, որոնք ներկայումս անհրաժեշտ են իւրաքանչիւր մէկի համար, եթէ ուղում է մեր հասարակական կեանքում ներգործական մասնակցութիւն ունենալ, որտեղ ամեն բան հրապարակաւ է կատարւում և մինչև անգամ յիշեալ յատկութիւնների մի քիչ աւելի լինելը անհամեմատ աւելի ցանկալի է, քան երկչոտութիւնն ու ամօթխածութիւնը: Ասկայն Ֆ. ի խօսակիցը իւր ասածն է պնդում, ցոյց տալով, որ յիշեալ անձնաւորութիւնը ոչ խելք և ոչ ընդունակութիւններ ունի: Դասարանական շարադրութիւնները և դրաւոր պատասխանները միշտ այնպէս վատ և անկապ էին, որ ծիծաղատեղի էին ամբողջ դասարանի համար, պարզ է, որ շարունակում է, նա, ներկայ հասարակութեան մէջ խելքով և ընդունակութիւններով չեն յաջողութիւն ձեռք բերում: Ապա օրինակ է բերում իւր ամենատաղանդաւոր աշակերտներից մէկին, որ տրիպուած է եղել մաքստատան փոքր պաշտօնեայի ամենահամեստ ու չնչին պաշտօնով բաւականանալու:

Ասկայն արդոյ մանկավարժի մոլորութիւնը ակներև է, և Ֆ. ցոյց է տալիս թէ ի՞նչ է նրա մոլորութիւնը. նրա սխալի էութիւնն այն ենթադրութիւնն է, թէ դպրոցականի և հասուն տղամարդի մտաւոր արժանիքները կարելի է միևնոյն չափով չափել, և թէ մանկավարժը՝ աշակերտի դպրոցում ունեցած յառաջադիմութեան և յաջողութիւնների համեմատ, կարող է ճիշտ կերպով նախագուշակել նրա յաջողութիւնները և կեանքի ասպարիզում: Այդպիսի նախապաշարում բաւական տարածուած է, բայց ոչ մի հիմք չունի, ուստի և հերքւում է ամենօրեայ կեանքի փորձով: Հեղինակը հաւատացած է, որ երկար ժամանակ իւր գործով պարապած իւրաքանչիւր ուսուցիչ կարող է շատ այդպիսի խաբուած յոյսերի և չիրաքանացող ակնկալութիւնների դէպքեր մտաբերել, և քանի

որ այդպիսի սխալներ յաճախ են կրկնուում, ապա պէտք է որ դրանց համար մի ընդհանուր աղբիւր լինի: Ֆ. մատնացոյց է անում երկու գլխաւոր աղբիւրների, առաջին՝ պարզ գիտակցութեան բացակայութիւն, թէ դպրոցն ու կեանքը մարդու մտաւոր ընդունակութիւնների նկատմամբ բոլորովին տարբեր պահանջներ են ներկայացնում և բոլորովին տարբեր կերպով ազդում նրանց վերայ, և երկրորդ՝ պակաս ուշադրութիւն մտաւոր ուժերի ուշ զարգանալու ճշգրիտ փաստի վերայ: Այ մի տեղ ներկայումս դպրոցը կեանքի համար իբրև նախապատրաստութիւն չէ ծառայում և դպրոցում ձեռք բերած ծանօթութիւնները գործնական կեանքի համար անհրաժեշտ պաշար չեն ապրիս: Այս երեւոյթը, Ֆ. ի կարծիքով, չէ կախուած դպրոցական գործի այս կամ այն պակասութիւնից, այլ անխուսափելի է իւր էութեամբ: Գործնական կեանքը զարգանում և բոլորովին այլ ճանապարհով է առաջ գնում, քան դպրոցի կեանքը, գործնական կեանքի շատ կողմեր ամենեւին արմատ չունին դպրոցական կեանքում: Իւրաքանչիւր քայլափոխում կեանքը այնպիսի բարդ խնդիրներ է ներկայացնում, այնպիսի խճճուած գրութիւնների, որոնց լուծելու համար զուր կլինէր դպրոցում ձեռք բերած ծանօթութիւններին և վարժութիւններին դիմել: Այդ պատճառով էլ դպրոցականի հոգեկան կեանքը և հասուն ազամարդի հոգեկան կեանքը շատ որոշ կերպով զանազանւում են միմեանցից, այն բարդութիւններն ու դժուարութիւնները, որոնց առաջ կանգ է առնում դպրոցականը՝ բոլորովին անզօր, և ձեռնթափ լինում՝ դաստիարակի կողմից օգնութեան և աջակցութեան սպասելով, ընդհակառակն հասուն ազամարդի համար, որ յոյսը մէն միայն իւր վերայ պէտք է դնէ, իբրև մի խթան են ծառայում, որ հարկադրում են նորան իւր գիտութեան և եռանդի ամբողջ պաշարն ի գործ դնելու: Այնուամենայնիւ այդպիսի երեւոյթը անխուսափելի է բնական է արդէն այն պատճառով, որ հոգեկան շատ ընդունակութիւններ՝ ըստ իրենց բնութեան, պէտք է զանազալ և աստիճանաբար զարգանան, և միայն այդ պայմանով կարող են իրենց կատարեալ զարգացման աստիճանին հասնել: Ընդ-

հախառախն, մտաւոր բոլոր ուժերի չափազանց վաղաժամ լարումը վերջին ծայր տխուր հեռանքների է բերում։

Բոլոր մանկավարժներին յայանի է դպրոցականների այն չարաբազդ տիպը, որոնց արհեստական միջոցներով յաջողուել է դպրոցի ծրագրի պահանջած նպատակին հասնելու համար մտաւոր բոլոր ուժերը լարել և որոնք կեանք են մտել՝ ժամանակից առաջ գուր վատնելով բնութեան իրենց տուած այն անդին գանձը, որ մտքի կարողութիւնն, ոյժ և եռանդ է կոչւում։ Եթէ այսպիսով դպրոցական ուսումը և կեանքը անհատի համար բոլորովին տարբեր պահանջներ են առաջ բերում՝ գործ ունին անհատի զարգացման պնազան շրջանների հետ, որոնք զանազանւում են ոչ միայն քանակով, այլև որակով, ապա բնականաբար ստանալիք արդիւնքներն էլ միանման չեն լինի։

Դպրոցի պահանջներին շատ լաւ յարմարուած անհառ բոլորովին անկարող է հանդիսանում կեանքի տապաւնիւմը, և ընդհակառակն։ Այդպիսի տարբերութիւններ յաճախ կարելի է դպրոցականների վերաբերմամբ նկատել։ Եւր կրկարամեայ մանկավարժական գործունէութեան ընթացքում Ծ. շատ է պատահել այն փաստին, որ երիտասարդ մարդիկ, դպրոցական տեսական գիտութիւնները իւրացնելու շատ քիչ ընդունակ, արտաքին կարգի հեղինակութիւն են վայելել իրենց ընկերների շրջանում, առանձնապէս իրենց դասարանից դուրս։ Բացի սրանից, նրան սրտիտ չէ, զարմացրել և այն բանը, որ այդպիսիները ոչ միայն ընկերների, այլ մինչև անգամ հասունների մէջ կատարեալ յարգանքի են արժանացել, և այս հանգամանքը նրան բոլորովին անտեղի է երեացել, աչքի առաջ ունենալով նրանց պակաս յառաջադիմութիւնը և դասարանում ունեցած վարքը։ Ի հարկէ, այստեղ խօսքը այն երիտասարդների մասին չէ, որոնց պակաս յառաջադիմութիւնը միշտ կախուած է եղել սարապելու ամենեւին ցանկութիւն չունենալուց, այլ նրանց, որոնք, չնայելով իրենց թափած բոլոր ջանքերին, այն առմենայնիւ չեն կարողացել բաւարար արդիւնքի հասնել, և այդ շնորհիւ իրենց ընդունակութիւնների կատարեալ բացակայութեան և քիչ զարգացման։ Այս դիտողութիւնը նրա

համար աւելի նշանակութիւն էր ստանում մանաւանդ, երբ հակառակ յատկութեան փաստերը որան զուգակշիռ էր դնում՝ երբ, օրինակ, դպրոցում աւանդուած գիտութիւններն ընդ որովոր ճիշդեցում փառաւոր առաջադիմութիւն ցոյց տուող մանուկներն ու երիտասարդները չէին կարողանում ամենաշնչին ազդեցութիւն անդամ ունենալ ոչ միայն մեծերի, այլև իրենց դասընկերների շրջանում և, չնայելով իրենց յառաջադիմութեան ու գովելի յատկութիւններին՝ աշխատասիրութեան, ջանասիրութեան և այլն, ամենաշնչին հեղինակութիւն չէին վայելում։ Պարզ է, որ արդէն այդպիսի կանուխ հասակումն էլ դպրոցն ու կեանքը բոլորովին տարբեր կերպով են գնահատում այս կամ այն անհատի անձնական յատկութիւնները, և ժամանակի ընթացքում ի հարկէ այդպիսի տարբերութիւնը աւելի կմեծանայ ու որոշակի կերպով կարագայտուի։

Ֆ. բաւական մանրամասն վերլուծութեան է ենթարկում այն տարբերութիւնը, որ կեանքն ու դպրոցը դնում են անհատի մտաւոր ընդունակութիւնների մէջ։ Այդ քննութեան արդիւնքը երկու խօսքով այս է. դպրոցը պահանջում և զարգացնում է համարեա բացառաբար յիշողութիւնը՝ անւշտների, դէպքեր, թուականներ ևլն մտքում պահելու և վերաբաղրելու ընդունակութիւնը. իսկ կեանքը մարդու բոլոր մտաւոր ընդունակութիւնների լարումն է պահանջում։ Սակայն քանի որ յիշողութեան և մտաւոր բոլոր ընդունակութիւնների զարգացման մէջ մի անհրաժեշտ պարասդիր զուգահեռականութիւն գոյութիւն չունի այսօրինքն՝ ն.ք.ս անհրաժեշտօրէն զուգընթացաբար չեն առաջ գնում, ապա և այն անսպասելի հեռանքներն են առաջանում, որոնց մասին արդէն խօսուեցաւ։ Եթէ վերցնենք երկու միմեանցից բոլորովին տարբեր տեղի մարդու՝ մի գիտնական մասնագիտի, որ իւր մասնագիտութեան շրջանին վերաբերեալ բոլոր տեղեկութիւններին քաջ ծանօթ է և որ ամենաբարձր փրացական խնդիրը քրքրելով՝ ճիշտ եզրակացութիւնների է դալիս, Բայց միևնոյն ժամանակ վերին աստիճանի միամիտ է և խելքը բան չի կարում գործնական

կեանքի խնդիրները — և մի ուրիշին, դրան բոլորովին հակառակ, գործնական մարդու տիպ, որ կենսական բարդ կոմբինացիաների մէջ անսովոր մտաւոր ընդունակութիւններ է ցոյց տալիս, բայց որ դժուարութեամբ է մտաբերում և իւրացնում այն ամէնը, ինչ որ անմիջական կապ չունի գործնական կեանքի հետ, ապա կարելի է ասել, որ մանկավարժները դեռ մինչև այժմ հակուած են չափազանց բարձր գնահատելու այն մարդկանց, որոնք մօտենում են առաջին տեսակին, և չափազանց ստոր՝ երկրորդի նմանողներին: Ըստ Թոմսոնի, նախագուշակութիւնների չիրականանալու պատճառներից մէկն այս հանգամանքն է:

Սակայն աւելի մեծ զանազանութիւն կարելի է նկատել դպրոցի և կեանքի մարդու մտաւոր ուժերի և հոգեկան եռանդի վերայ ունեցած ազդեցութեան ուժի (ИНТЕНСИВНОСТЬ) մէջ: Հասարակական կեանքն իւր տիրող շահերով, զանազան նպատակներով ու խնդիրներով, ընդունակ է առանց որ և է ջանքի, գործունէութեան մէջ գնելու և ամենաբարձր լարման հասցնելու բազմաթիւ անձնական և հասարակական, բարձր և ստոր, եսասիրական և վեհանձնական զգացումներ, որ դպրոցից, ի հարկէ, շատ հեռու են, և մինչև իսկ բոլորովին անտեղի նրա համար: Դպրոցը համարեա բացառապէս գործ ունի աշակերտի բանականութեան՝ նրա մտածողական կարողութեան հետ, մինչդեռ մարդկանց մեծամասնութեան մէջ միտքը միայն այն դէպքում է գործում, երբ մի որևէ զգացում նրան այդ առիթ է տալիս և կամ թէ նրա առաջ մի պարզորոշ վերջնական նպատակ է լինում: Եւրաքանչիւր դասարանում այդպիսի հոգու տէր բաւականաչափ աշակերտներ կգտնուին, այն ինչ դպրոցը իւր ուսմամբ միջոց չունի նրանց մէջ անհրաժեշտ զգացումն առաջ բերելու և նրա նպատակը այնքան էլ որոշ չէ, այդ պատճառով այդպիսի աշակերտների իմացականութիւնը երբեք իւր ամբողջ ուժով չէ գործում: Սակայն ուշադրութիւն դարձրէք այդպիսի անհատների վերայ դասարանից դուրս, երբ նրանք հետամուտ են լինում իրենց անձնական՝ իրօք երեխայական, բայց և այնպէս կենսական՝ շահերին: Շատ յաճախ հէնց այդ անհատ-

ները իրենց ընկերների մէջ մեծ հեղինակութիւն են ձեռք բերում. նորա նախաձեռնող են հանդիսանում դպրոցական բոլոր խռովութիւններին, խմբակցական չարութիւնների, բողոքների ևն: Այդ դերը խաղալու համար մանուկը կամ երիտասարդը, ի հարկէ, պէտք է մտաւոր ուժերի մի որոշ քանակութիւն ունենայ. այն ինչ, չնայելով դրան, նա անկարող է երևում դպրոցի տուածը բաւարար չափով իւրացնելու և իւր դասատուներին իրաւունք է տալիս իրեն շատ քիչ ընդունակութեան տէր հաճարելու և իւր համար տխուր ապագայ գուշակելու: Բայց իրօք այդպէս չէ. այդպիսի անձի մտաւոր ուժերը ոչ միայն բաւարար կարող են լինել, այլ մինչև իսկ շատ լաւ, սակայն դպրոցը չի կարողանում նրանց գործունէութեան մէջ դնել. իսկ երբ այդ անում է կեանքը, այն ժամանակ ուսուցչին մնում է միայն հիանալ իւր նախկին աշակերտի վերայ կատարուած այդ զարմանալի կերպարանափոխութեան վերայ: Ի հարկէ շատ կարեւոր կլինէր իրօք քիչ ընդունակութիւն ունեցող և միայն այդպէս կարծուող աշակերտների մէջ գործնական կերպով զանազանութեան ստոյգ նշաններ սահմանել, սակայն դժբախտաբար այդպիսի նշաններ չկան և իւրաքանչիւր ուսուցիչ ստիպուած է իւր փորձառութեամբ, խորը թափանցելու կարողութեամբ և ինչ, առաջնորդուել: Առանձնապէս իւր մասին Ֆ. ասում է, որ իրեն համար միշտ մեծ զին են ունեցել աշակերտի դասարանից դուրս ցոյց տուած ընթացքի և ընկերների նորա հետ ունեցած յարաբերութեան վերաբերեալ տեղեկութիւնները: Այդ տեսակէտից նրան յաջողուել պարզ նշաններ գտնել, թէ ինչպէս անսովոր մտաւոր ընդունակութիւնների տէր են լինում այնպիսի աշակերտներ, որոնք դասարանական պարտավունքների կողմից միջակից էլ շատ ցածր էին դասուում: Ժամանակն արդարացնում է նորա ենթադրութիւնները և նրա համար բարեպաշտ հերպարանափոխութիւնը անսպասելի չէ երևում:

Սխալներն երկրորդ աղբիւրը, որ կարողանում է մինչև անգամ ուշադիր մանկավարժին էլ մոլորեցնել, մտաւոր ընդունակութիւնների, իսկ երբեմն և անսովոր տաղանդաւորութեան,

յիրաւի յետամնաց զարգացման փաւան է: Ախայն ստանձ-
 նապէս հեշտ է արւուսի, եթէ աշակերտը լաւ չէ խօսուսի, երկ-
 չոտ և ամօթխած բնաւորութիւն ունի, և եթէ, բացի դրանից,
 դանդաղ զարգացած մտաւորի հետ՝ դանդաղած է և ֆիզի-
 քականը, որ նրան անձոռնիս թոյլ, ամեն կողմով իւր ընկեր-
 ներից պակասաւոր և յետ մնացած է գարձնում: Ախակով
 այդպիսի աշակերտին, մանկավարժն ակամայ այն եզրակացու-
 թեան է գալիս, որ այդ անհատը անյուսալի է. իսկ այդ-
 պիսի կարծիք ունենալը կրկին կորստաբեր կերպով արտա-
 յայտուում է նրա դէպի աշակերտն ունեցած յարաբերու-
 թեան մէջ: Մանկավարժի կողմից այդպիսի վերաբերմունք
 նկատելով, աշակերտներն աւելի ևս երկչոտ են դառնում, հոգ-
 ւով ընկճւում և աշխատելու բոլոր ընդունակութիւնները
 կորցնում: Ասկայն օրինաւոր մանկավարժը ինչո՞ւ ցոյց կտայ
 աշակերտին իւր այդօրինակ վարմունքը, — նկատում են հե-
 ղինակին: Իւր բազմամեայ փորձով հեղինակը համոզուած
 է, որ ուսուցչին չի յաջողուի ծածկել իւր վերաբերմունք-
 ները. դէմքի արտայայտութիւնը, բերանից ակամայ դուրս
 թռչող խօսքը, բարկութիւնը և ինչ կմատնեն, միշտ կը մեր-
 կացնեն ճշմարտութիւնը և աշակերտի վերայ ձնչիչ ազդե-
 ցութիւն կունենան: Թէ ինչպիսի կարեւոր նշանակութիւն
 ունի այդպիսի դէպքերում աշակերտի սուբյեկտիւ վիճակը՝
 երևում է Ֆ. ի բերած հետեւեալ օրինակից. նրա պատշո-
 նակից ուսուցչիներից մէկն իւր տարակուսանքն է յայտնում
 մի աշակերտի մասին, որին բոլորը — թէ ուսուցչիները և թէ
 աշակերտները բոլորովին անընդունակ և անգարգացած էին
 համարում, քանի որ նա դասարանում երբէք բաւարար
 պատասխան չէր տուած, մինչդեռ նրա շարադրութիւնները
 աչքի էին ընկնում իրենց գեղեցիկ շարակազմութեամբ և
 յաճախ պարզ ու տաղանդաւոր արտայայտութեամբ: Ֆ. ա-
 ռաջարկում է պաշտօնակցին՝ նրա ամենալաւ շարադրու-
 թիւններից մի քանիսը բարձրաձայն կարդալ տալ դասա-
 րանում ընկերների առաջ. փորձը կատարեալ յաջողութեամբ
 է պսակւում: Յաղթելով իւր երկչոտութեանը և տեսնելով,
 որ ամբողջ դասարանը ուշադրութեամբ և հետաքրքրութեամբ

լսում է իւր շարողութիւնը, աշակերտը քաջալերւում է, այնուհետեւ սկսում է պատասխանել աւելի համարձակ և խելացի կերպով և շուտով դառնում է ամենալաւ աշակերտներից մէկը:—Բայց ոչ միայն ամենօրեայ մանկավարժական փորձը, այլև պատմական ստոյգ վկայութիւնները ցոյց են տալիս յետամնաց դարգացման փաստի անկասկածելիութիւնը. բաւական է յիշել, որ շատ նշանաւոր մարդիկ՝ Արքեր, Նիւտոն և ինչ, երկար ժամանակ իրենց կատարեալ անընդունակութեամբ յուսահատեցրել են իրենց ուսուցիչներին: Մի աւանդութեամբ ս. Թովման (Ակուինացին) աշակերտ ժամանակ իւր կարծեցեալ բժամաութեան շնորհիւ ընկերների ծագրի ասարկան է եղել. նրան «անբան անասուն» մականուն են տալիս եղել: Սպասեցէք, ասել է մի անգամ ուսուցիչը, այդ անասունը իւր բառաչով կիւլացնէ ամբողջ աշխարհը: Եթէ աւանդութիւնը ճշմարտութեան մի հատիկ պարունակում է, նկատում է Ֆ., ապա պէտք է խոստովանել, որ ս. Թովմայի ուսուցիչը մեծ և թափանցող մանկավարժ է եղել:

Ի հարկէ մի քանի նշաններ կան, որոնցով ուշադիր դաստիարակը կարող է գուշակել աշակերտի իսկական լնայթը: Արքեմն, օրինակ, ըստ երևութին անյուսատու մի աշակերտի վրայ, որ չի կարողանում ընկերներին ատանձին դժուարութիւն չպատճառող խնդիրները լուծել, լաւ է փրապետում լեզուին և չի կարողանում զրիչը ձեռքում ամուր բռնել, — ուսուցիչը նկատում է մոտաւոր հայեացք, դէմքի կենտրոնացող արտայայտութիւն, յօնքերի կիտում, մի խօսքով մտքի անընդհատ գործունէութեան բոլոր նշանները: Դէպքեր են լինում, ասում է Ֆ., երբ ուսուցիչը ակամայ մի տեսակ ծնշում է զգում այդպիսիների հանդէպ, որոնք լուռ ու մունջ նայում են ակնապիշ: Թուում է, թէ կանգնած ես ուշադիր դիտողի առաջ, որ ամեն ինչ նկատում է և աշխատում է միտքը պահել: Ի հարկէ դուրս հետ մէկտեղ կան և աւելի որոշ նշանների, որոնցով հնարաւորութիւն ենք ստանում թափնուած զոյնանման հոգեւոր ուժեր ձանաչել, որոնք միայն քողարկուած են յետամնաց դարգացումով: Այդ կողմից կարեւոր է նախ յիշողութեան զբոսթիւնը: Ճիշտ է,

մէքենական լաւ յիշողութիւնը մտաւոր ուժի ապացոյց չէ, բայց և այնպէս նրա առձեռն լինելը ըստ երեւութին անյուսալի անհատի մէջ արդէն կարեւոր նշան է, քանի որ անդիտակից յիշողութեան՝ գիտակցական յիշողութեան ընդունակութեան փոխուելը նկատուում է յաճախ: Բացի դրանից, սւշադիր գիտողութեան ժամանակ երբեմն յաջողւում է մտաւոր խոր գործունէութեան ուրիշ նշաններ էլ երեւան հանել: Սշակերտը հակուած է շատ հարցեր տալու, որոնք երբեմն անկապ, ուսուցչի համար ձանձրալի և դատարկ բան են թուում, սակայն ժամանակ անցնելուց յետոյ միայն ուսուցիչը զարմացմամբ նկատում է, որ բոլոր հարցերը իրենց միտքն են ունեցել և որ աշակերտը այդ պատասխաններից տրամաբանական բոլորովին ուղիղ համեմատութիւններ և եղբակացութիւններ է արել, թէև բոլոր այդ տրամաբանական անդամահատութիւնները չափազանց դանդաղ են կատարուած և նոցա ներքին արժանիքը քոզարկուած է աշակերտի բառերով արտայայտելու կատարեալ անկարողութեամբ: Այդպիսի անհատները արդէն էլ իրրե բացառութիւն չեն պատահում, ուստի և Ֆ. Հիմնուելով պատմական օրինակների, դպրոցական ամենօրեայ պրակտիկայի և իւր անձնական երկարամեայ փորձի վերայ, իրեն թոյլ է տալիս հետևեալ խորհրդով դիմելու իւր երիտասարդ ընկեր պաշտօնակիցներին. «Եթէ դաստիարակը, ծանօթանալով դասարանին, պատահի մի երիտասարդի կամ մանուկի, որ դժուարութեամբ է իւրացնում դպրոցական գիտութիւնները, և կամ — կարող է պատահել — ֆիզիքական յետամնացութեան նշաններ է ցոյց տալիս՝ անձո՞սնի շարժումներ, վատ լեզու, վատ գրութիւն և չնայ ապա թող նա միանգամից վատ նախագուշակութիւն չանի, այլ մտածի, թէ արդեօք այս աշակերտն ևս չի պատկանում այն մարդկանց թուին, որին պատկանում էին ս. Թովման, Տովապետ Վիկան, Վոլբերը և ուրիշները: Այդպիսի հայեցակէտ ունենալով՝ մանկավարժը, թերեւս աւելի ուշադիր գիտողութեան ժամանակ, նշաններ կգտնէ, որոնք համոզեն իրան, թէ նա իւր առաջ ոչ թէ մի անյուսալի, բաղդից զրկուած անհատ ունի, այլ մի ճշմարիտ մտա-

և որ ոյժ, որի կատարեալ դարգացման համար հարկաւոր են միայն ժամանակ և բարեյաջող հանգամանքներ»:

Ա. Տէր Պօղոսեան.

„Вост. Восток.“ № 6, 1902 г.



ՅԱԼԻԹԱՀԱՐՍԸ, Պուշկինի, Թարգմ.
Կ. Կրասիկնիկեանի:

(Շարունակութիւն եւ վերջ)

Հիմա դալիս են ամէն տեսակ յանցանքներ խառն ի խառն ի մի խմբուած, հետեւեալ վերնադրի տակ, որտեղ պատահում են և չորուցամաք, ցուրտ և անդոյն արտայայտութիւններ.

Ստիական քաղաքացիութիւն եւ անձեղութիւններ.

«Իսկի ընդունակ էլ չեմ»—շնորհի չունիմ:

«Միքէ յարմա՞ր է»—Այս ինչի մասն է:

«Բախսը քո ձեռքից չսաս»—ըխայցնես:

«Աւելի քիչ գալ»—ուշ ուշ գալ:

«Իսկ յիմարներդ այդպէս համոզել»—խելից հանել:

«Գէթ մի քիչ դրամ, շատ շատ կը շինեմ»—աւելի շաւ:

«Աղջիկ, յիշիր իմ խորհուրդները»—Երբեմն կարելու է որոշել մտապահութիւնը՝ մտաքերութիւնից, իսկ այստեղ պէտք է ասուի՝ մտաւոր պահիր:

«Երբ քեզ տեսնում եմ»—հենց քեզ ...:

«Մի տարի, քոյլ տուր, որ քեզ տեսնեմ»—Մի տարի, արի քեզ ս.

«Ամբողջ քանկազին քարերով ծածկուած»—ամբողջապէս կամ թողոր:

«Ա, անա՛ր քե ինչ ...»—հայերեն չե, կարելի է ասել՝ այդպէս, հմ...:

«Հենց դրա համար քեզ ասում էի»—Տեսնա՛ր, հայտնի ինչ էի ասում քեզ:

«Եւ նա կարող էր, ինչպէս քարի մարդ»—... այդ քարի մարդը:

«Ի՛նչպէս, եւ դրամ տալ»—каково! նշանակում է ժպտութեան, հա-